

ՍԱՂՄՈՍ 69

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Նեղության աղաղակ և նզովք թշնամիների վրա	Հրատապ աղերս նեղության մեջ օգնության համար	Անձնական թշնամիներից ազատվելու աղոթք	Օգնության աղաղակ	Ողբ
<u>MT ներածություն</u>				
Գլխավոր երաժշ- տին, շոշանիմի («Շուշանների» եղանակով) Դավթի Սաղմոսը				
69:1-4	69:1-3	69:1-3	69:1-3	69:1 69:2 69:3
	69:4	69:4	69:4	69:4
69:5-12	69:5-12	69:5 69:6-8	69:5-8	69:5 69:6ա,բ 69:6գ,դ 69:7-9
		69:9-12	69:9-12	69:10-12
69:13-15	69:13-15	69:13-15	69:13-15	69:13 69:14-15
69:16-19	69:16-18 69:19-21	69:16-18 69:19-21	69:16-18 69:19-21	69:16-18 69:19-20
69:20-21				69:21-23
69:22-28	69:22-28	69:22-29	69:22-28	69:24-26
69:29-33	69:29-33		69:29-33	69:27-28 69:29-31
		69:30-33		

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԸ («Մուրք Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրք Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գրույթը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը կիրառում է երկու ամենատարածված անուններն Աստծո համար՝

1. *Էլոհիմ* (այսինքն՝ մի տիտղոս, որը կենտրոնանում է Աստծո վրա որպես այս մոլորակի վրա գոյություն ունեցող ամբողջ կյանքի համար արարչի, պահապանի և մատակարարի) – Սաղմ. 69:1,6,13,29,30,32,35 (նաև մեկ այլ տարբերվող ձև Սաղմ. 69:3-ում՝ «Աստված» /*Էլոսահ*/ և Սաղմ. 69:6՝ «Աստված /*Էլոսահ*/ Իսրայելի»):
2. ՅԱՀՎԵ (այսինքն՝ մի տիտղոս, որ կենտրոնանում է Աստծո վրա որպես փրկչի, ազատագրողի, ուխտ կապող Աստծո):
 - ա. Չորքերի Տեր (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ), Սաղմ. 69:6
 - բ. ՅԱՀՎԵ, Սաղմ. 69:13, 16, 31, 33

Բ. Սաղմոսերգուն կյանքից, ընտանիքից, ընկերներից օտարացած է զգում (տես՝ Սաղմ. 69:8) Աստծո վրա իր ունեցած վստահության պատճառով (տես՝ Սաղմ. 69:9): Հիսուսն այս Սաղմոսն օգտագործում է նկարագրելու Իր հավատակից հրեաների կողմից մերժված լինելու Իր իսկ զգացողությունները: Տարբերությունը այն է, որ սաղմոսերգուն կամենում է վերժինդրություն և դատաստան (տես՝ Սաղմ. 69:22-28), սակայն Հիսուսը խնդրում է Իրեն հալածողների համար թողություն, քանի որ չգիտեին թե ինչ էին անում (տես՝ Ղուկ. 23:34):

Գ. Այս Սաղմոսն ունի շատ աղոթքներ, որոնցից մի քանիսը արտահայտված են որպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ և մի քանիսն էլ՝ որպես ԱՆԿԱՏԱՐՆԵՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով (տես՝ Սաղմ. 69:6):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 69:1-4

¹Փրկի՛ր ինձ, ո՛վ Աստված, քանի որ ջրերն իմ անձին հասան:

²Խորունկ տիղմի մեջ եմ ընկղմվում,

Որտեղ կանգնել հնարավոր չէ:

Խորը ջրերի մեջ մտա, ուր հորձանքներն ինձ ընկղմեցին:

³Հոգնեցի ես կանչելուց, կոկորդոս չորացավ,

Աչքերս նվաղեցին իմ Աստծուն սպասելով:

⁴Առանց պատճառի ինձ ատողները գլխիս մազերից շատ են .

Ինձ կործանել ցանկացողները, նրանք, որ հանիրավի իմ թշնամիներն են,

Չորեղ են . ինչ որ չէի հափշտակել, վճարեցի նրանց:

69:1-4 Այս պարբերությունը ազատության աղոթք է (BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) կիրառելով նեղության համար մի քանի փոխաբերություն:

1. ջրերը իմ անձին հասան (տես՝ Սաղմ . 69:1բ, Սաղմ . 32:6)
2. խորունկ տիղմի մեջ եմ ընկղմվում (տես՝ Սաղմ . 40:2)
3. կանգնել հնարավոր չէ (BDB 765, ՀԿ-ում միայն այստեղ է, նմանօրինակ նկարագրություն կա Սաղմ . 40:2-ում):

Այս աղոթքը նա կրկնում է Սաղմ . 69:14-15-ում: Հրեաները ապրում էին կիսաչոր հողերում և վախենում էին ջրի համար: Անգամ Մոդոնոն իր անձնակազմը լցրել էր Փյունիկեցիներով, ոչ թե հրեաներով: Պաղեստինը հայտնի է իր տխրահոշակ վտանգավոր ջրհեղեղներով անձրևային եղանակներին:

69:1 «կյանք» Սա բառացիորեն *nephesh* (BDB 659) բառն է: Տես Սաղմ . 3:2 և Ծննդ . 35:18 գրառումները առցանց տարբերակով: Այստեղ այն կարող է նշանակել «վիզ», բայց եթե այդպես է, սա հազվադեպ է (տես՝ հավանաբար Հովնան 2:5):

69:2-3 Նկարագրության սահունությունը կարելի է դիտարկել Սաղմ . 69:2-ում չափից ավելի շատ ջրի և Սաղմ . 69:3-ում չորացած կոկորդի (BDB 359, այս բառը կարելի գտնել միայն այստեղ ՀԿ-ում, տես՝ NIDOTTE, հատոր 2, էջ՝ 295) հակադրության մեջ: Ջուրը հզոր նկարագրություն է՝

1. ստեղծագործության ջրերը
2. ջրհեղեղ
3. տարեկան անհրաժեշտ անձրևները
4. արցունքներ
5. կյանքի և առողջության համար անհրաժեշտություն

69:3-4 Սաղմոս 69:3 այլաբանական լեզու է, որը նկարագրում է տխրություն և սուգ հենց այն վիճակի համար, որում գտնվում էր սաղմոսերգուն (տես՝ Սաղմ . 69:10-11): Այդ իրավիճակը նկարագրված է Սաղմ . 69:4-ում:

1. շատ մարդիկ (այսինքն՝ իր ժողովրդից) առանց պատճառի ատում էին նրան (տես՝ Հովի . 15:25)
2. նրանք ուզում են բնաջնջել՝ սպանել նրան
3. նրանք հզոր մարդիկ են (տես՝ Սաղմ . 69:12)

Սաղմոսերգուն հաստատում է, որ իրենց ատելությունը և հարձակումները առանց պատճառի էին (տես՝ Սաղմ . 69:4գ): Նա սա օգտագործում է որպես Մովսիսական ուխտի հետ կապված բոլոր ոլորտներում իր անարատությունը մատնանշող միջոց: Նա չի պնդում իր անմեղությունը (տես՝ Սաղմ . 69:5):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 69:5-12

⁵Ո՛վ Աստված, իմ հիմարությունը դու գիտես

Ու մեղքերս քեզանից պահված չեն:

⁶Քեզ սպասողներն իմ պատճառով թող չամաչեն, ո՛վ ՏԵՐ,

Չորաց Աստված. Քեզ փնտրողներն իմ պատճառով

Թող ամոթահար չլինեն, ո՛վ Իսրայելի Աստված:

⁷Քանի որ Քեզ համար նախատինք կրեցի,

Ամոթը ծածկեց իմ երեսը:

⁸Եղբայրներիս օտար ու մորս որդիներին անձանոթ դարձա:

⁹Քանի որ Քո տան նախանձը ինձ կերավ,

Ու Քեզ նախատողների նախատինքը ինձ վրա ընկավ:

¹⁰Երբ արտասվեցի ու իմ անձը խոնարհեցի ծոմ պահելով,

Սա ինձ նախատինք համարվեց:

¹¹Քուրձն ինձ հագուստ դարձրի ու նրանց ծաղրի առարկան դարձա:

¹²Գարպասի առջև նստողներն իմ մասին էին խոսում,

Ես հարբեցողների երգի նյութն էի:

69:5-12 Այս պարբերությունը նկարագրում է բոլոր հավատացյալների վիճակը: Մենք գիտենք, որ մեղավոր ենք (տես՝ Սաղմ. 69:5), սակայն փորձում ենք ապրել աստվածահաճո կյանքով (տես՝ Սաղմ. 69:9ա): Այս լարվածության լույսի ներքո սաղմոսերգուն մի քանի խնդրանք է ներկայացնում՝

1. թող նրանք, որ սպասում են (վստահում են) Քեզ, ամոթահար չլինեն իմ պատճառով:

2. թող նրանք, որ Քեզ են փնտրում, չանարգվեն իմ պատճառով

Այս սաղմոսերգուն համարձակությամբ հայտարարում է, որ իր խնդիրների պատճառը ՅԱՀՎԵԻ վրա ունեցած իր հավատքն է (տես՝ Սաղմ. 69:7,9): Սաղմոսի այս առանձնահատկությունն է (Սաղմ. 69:9), որ կատարելապես ակնարկում է Հիսուսին (տես՝ Հովհ. 2:17): Նաև նկատեք, որ Դողոսը Հռոմ. 15:3-ում Հիսուսի համար ավելացնում է փոխանորդության կողմը (տես՝ Եսայի 53, Մարկ. 10:45) Սաղմ. 69:9բ-ից:

69:5 «մեղքերս քեզանից պահված չեն» Տես Սաղմ. 44:21-ի գրառումը:

69:6 «Թող . . .» Սա առաջինն է ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով կիրառված ԱՆԿԱՏԱՐՆԵՐԻ շարքում: Այս Սաղմոսը շատ ունի այս բառից:

1. թող . . . ամոթահար չլինեն՝ Սաղմ. 69:6 – BDB 101, KB 116, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

2. թող . . . չամաչեն /չանարգվեն/, Սաղմ. 69:6 – BDB 483, KB 480, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ

3. թող . . . ինձ չընկղմի՝ Սաղմ. 69:15 – BDB 1009, KB 1474, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

4. թող . . . ինձ չկլանի՝ Սաղմ. 69:15 – BDB 118, KB 134, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

5. թող . . . իր բերանն իմ վրա չփակի՝ Սաղմ. 69:15 – BDB 32, KB 37, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

6. թող . . . նրանց սեղանը նրանց առջև որոգայթ լինի՝ Սաղմ. 69:22ա – BDB 224, KB 243, *Qal* ՀԱՅՅԱԿԱՆ

7. թող . . . նրանց համար թակարդ դառնա՝ Սաղմ. 69:22բ – ենթադրվում է #6-ից

8. թող նրանց աչքերը մթնեն, որպեսզի չտեսնեն՝ Սաղմ. 69:23 – BDB 364, KB 361, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

9. թող Քո սաստիկ բարկությունը նրանց վրա հասնի՝ Սաղմ. 69:24 – BDB 673, KB 727, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ

10. թող նրանց բնակավայրը ավերակ դառնա՝ Սաղմ. 69:25 – BDB 224, KB 243, *Qal* ՀԱՅՅԱԿԱՆ

11. թող ոչ ոք չապրի նրանց վրաններում՝ Սաղմ. 69:25 – նույնը ինչ կետ 10

12. թող չհասնեն Քո արդարությանը՝ Սաղմ. 69:27 – BDB 97, KB 112, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

13. թող ջնջվեն Կենաց գրքից՝ Սաղմ. 69:28 – BDB 562, KB 567, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ

14. թող արդարների հետ չգրվեն՝ Սաղմ .69:28 – BDB 507, KB 503, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ
15. թող Քո փրկությունը ինձ վեր պահի՝ Սաղմ .69:29 – BDB 960, KB 1305, *Piel* ԱՆԿԱՏԱՐ (կիրառված դրական իմաստով)
16. թող երկինքն ու երկիրը փառաբանեն Նրան՝ Սաղմ .69:34 – BDB 237, KB 248, *Piel* ԱՆԿԱՏԱՐ (կիրառված դրական իմաստով)

Այս բոլորը (բացառությամբ կետ 15 և 16) արտահայտում են սաղմոսերգուի աղոթքները Աստծուն, որպեսզի Նա գործի իր թշնամիներին հակառակ: Մա այս սաղմոսի այն տարրն է, որ բացակայում է Հիսուսի կողմից խաչի վրա այս Սաղմոսի կիրառության ժամանակ:

69:10-11 Սաղմոսերգուի հենց աղոթքի քայլը և խոնարհությունը դարձավ «նախատինք» (BDB 357), «խոսքուզրույց, ասեկոսե» (BDB 605) իր հզոր ընկերների (այսինքն՝ «նրանց, ովքեր նստում են դարպասների մոտ», Սաղմ .69:12ա), ինչպես նաև հարբեցողների համար (Սաղմ .69:12բ):

❖ **«ծոմ պահելով . . . քուրձ»** Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՍԳԱԼՈՒ ԾԵՄԵՐ

Նկատել՝ 5-12 համարների միջև հակադրությունը:

1. հավատքով հեղինակը, ով ծառայում է Աստծուն աղոթքի, ծոմապահության և ծառայության մեջ
2. անհավատները դռների մոտ (այսինքն՝ առաջնորդների վայրը), ովքեր նվաստացնում են նրա նվիրումը և հորինում հարբեցողների երգեր:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 69:13-15

¹³Իսկ ես, իմ աղոթքը Քեզ է ուղղված, ո՛վ ՏԵՐ,
 Ընդունելի ժամանակին . ո՛վ Աստված,
 Քո մեծ ողորմությամբ, Քո փրկության ճշմարտությամբ լսի՛ր ինձ:
¹⁴Հանի՛ր ինձ ցեխից, թող չընկղմվեմ,
 Ինձ ատողներից ու խորունկ ջրերից թող ազատվեմ:
¹⁵Ջրերի հորձանքը թող ինձ չընկղմի,
 Անդունողը թող ինձ չկլանի, ու գուրք իմ վրա իր բերանը չփակի:

69:13-15 Սաղմոսերգուն շարունակում է իր աղոթքները: Դրանք ուղղված են՝

1. ՅԱՀՎԵԻՆ
2. ընդունելի ժամանակի մեջ

Նկատել՝, որ սաղմոսերգուի վստահությունը ՅԱՀՎԵԻ վրա անգամ անհանգիստ ժամանակներում և այն գիտությունը, որ ճիշտ ժամանակին Նա կպատասխանի և կփրկի (տես՝ Սաղմ . 32:6, Ես . 49:8, 2 Կորնթ . 6:2): Գոյություն ունի մի ստույգ՝ պատշաճ ժամանակ (տես՝ Ժող . 3:1-8):

Սաղմոսերգուն վստահում է ՅԱՀՎԵԻ՝

1. բարեգթությանը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED), Սաղմ .69:13բ
2. հավատարմությանը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . Հավատալ, վստահել, հավատք, և հավատարմություն ՀԿ-ում), Սաղմ .69:13գ

Ուշադրություն դարձրե՛ք երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻՆ՝

1. պատասխանի՛ր ինձ – BDB 722, KB 851, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմ .69:13գ
2. ազատի՛ր ինձ – BDB 664, KB 717, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմ .69:14ա

Սաղմ .69:14-15 նկարագրում է, թե ինչից է փորձում ազատվել սաղմոսերգուն՝

1. թող չընկղմվեմ (տես՝ Սաղմ .69:1-2): Տարբեր վերլուծություններ են տրված՝
 - ա. *ՀԿ-ի վերլուծական բանալի*, Ջոն Ուոնգի կողմից, որտեղ այն ընդունված է որպես *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (էջ՝ 374)
 - բ. *ՀԿ-ի վերլուծության ուղեցույց*, Բիլ, Բենքզ և Սմիթի կողմից, ընդունված որպես *Qal* ԸՂՁԱԿԱՆ (էջ՝ 439)
2. թող ես ազատվեմ . . . Տարբեր վերլուծություններ են տրված՝

ա. Վերլուծական բանալի – Niphal ԱՆԿԱՏԱՐ (էջ՝ 374)

բ. Վերլուծական ուղեցույց – Niphal ԸՂՁԱԿԱՆ (էջ՝ 439)

Սաղմոսերգուն նկարագրում է իր հակառակորդներին որպես «իր ախոյանները» և «ջրի խորունկ տեղեր» (Սաղմ. 69:14բ): Սաղմ. 69:14 և 15 կիրառում է նույն նկարագրությունը ինչպես Սաղմ. 69:1-2 (տես՝ Սաղմ. 124:4-5, Եսայի 43:2):

69:15գ «գուրբ» Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Որտե՞ղ են մեռելները, հատկապես՝ Շեղ, մեռելների պահման վայրը, որը հաճախ համագոր է «գուրին» (տես՝ Թվոց 16:33, Սաղմ. 28:1, 88:3-4, Առակ. 1:12): Այն կարող է վերաբերել գերեզմանին (տես՝ Սաղմ. 141:7):

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 69:16-19

¹⁶Լսի՛ր ինձ, ո՛վ ՏԵՐ. քանի որ Քո գթասիրությունը լավ է:

Քո առատ ողորմության համաձայն նայիր ինձ,

¹⁷Ու երեսդ մի՛ ծածկիր Քո ճառայից,

Քանի որ ես նեղության մեջ եմ, շուտով պատասխանի՛ր ինձ:

¹⁸Մոտեցի՛ր իմ անձին ու փրկի՛ր այն .

Իմ թշնամիներից ազատիր ինձ:

¹⁹Դու գիտես իմ նախատիները, իմ ամոթն ու անարգանքը .

Քո առջև են բոլոր իմ ախոյանները:

69:16-19 Այս պարբերությունը բնութագրվում է ԱՂԱԶԱՆՔԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ:

1. պատասխանի՛ր ինձ՝ Սաղմ. 69:16 – BDB 7721, KB 851, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. նայի՛ր ինձ՝ Սաղմ. 69:16 – BDB 815, KB 937, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (տես՝ Սաղմ. 27:9, 102:2, 143:7)
3. շուտով (բառացի՝ շտապ)՝ Սաղմ. 69:17 – BDB 554, KB 553, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. պատասխանի՛ր ինձ՝ Սաղմ. 69:17 – նույնը ինձ կետ 1
5. մոտեցի՛ր ինձ՝ Սաղմ. 69:18 – BDB 897, KB 1132, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
6. ազատի՛ր ինձ՝ Սաղմ. 69:18 – BDB 145 I, KB 165, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
7. փրկի՛ր ինձ՝ Սաղմ. 69:18 – BDB 804, KB 911, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԵԼ, ՓՐԿԱԳԻՆ):

Նկատե՛ք, որ այս աղոթքի խնդրանքների համար հիմք են հանդիսանում՝

1. ՅԱՀՎԵԻ բարեգթությունը (BDB 338) բարի է, Սաղմ. 69:16
2. ՅԱՀՎԵԻ մեծ գթառատությունը (բառացի՝ «ողորմությունները», BDB 933), Սաղմ. 69:16
3. ՅԱՀՎԵ գիտի սաղմոսերգուի վիճակը, Սաղմ. 69:19

ա. սաղմոսերգուի սիրտը

բ. թշնամիների սիրտը

69:17 «Քո ծառան» Սա կարող է նշանակել՝

1. հատուկ առաջնորդ՝ ինչպես Մովսեսը, Հեսուն
2. հղում Դավթին կամ իր արքայական սերունդներին (այսինքն՝ ի վերջո Մեսիային)
3. Եսայի 40-55 պոեմներում Մեսիական հատուկ Ծառան
4. ուխտի հավատացյալին վերաբերող տիտղոս (տես՝ Սաղմ. 69:36)

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՄ ԾԱՌԱՎՆ
SPECIAL TOPIC: MY SERVANT**

Սա հարգանքի և կոչման տիտղոս էր (BDB 713):

1. Այն կիրառվում էր հավաքական իմաստով՝

- ա. Նահապետները որպես մի խումբ՝ 2 Օր. 9:27
 - բ. մարգարեները՝ 4 Թագ. 9:7, 17:13, Եզրաս 9:11, Երեմ. 7:25, 26:5, 29:19, 35:15, 44:4
 - գ. Իսրայելը՝ Սաղմ. 105:6, 136:22, Եսայի 41:8-9, 42:18-19, 44:1,2,21, 45:4, 48:20, 49:3, Եր. 30:10, 46:27,28
 - դ. Սեպտուագինտան ավելացնում է Եսայի 42:1-ին մի արտահայտություն, որը այն դարձնում է ազգային Իսրայելի իմաստով («Հակոբը իմ ծառան է, ես նրան կօգնեմ. Իսրայելը իմ ընտրյալն է»)
2. Այն կիրառվում էր անհատական իմաստով՝
- ա. Աբրահամ – Ծննդ. 26:24, Սաղմ. 105:6
 - բ. Հոբ – Հոբ 1:8, 2:3, 42:7,8
 - գ. Իսահակ – Ծննդ. 24:14
 - դ. Հակոբ – 1 Մնաց. 16:13, Սաղմ. 105:6, Եզեկ. 28:25
 - ե. Մովսես – Ելից 14:31, Թվոց 12:7-8, 2 Օր. 34:5, Հեսու 1:1-2,7,13,15
 - զ. Հեսու – Հեսու 24:29, Դատ. 2:8
 - է. Քաղեր – Թվոց 14:24
 - ը. Դավիթ – Եզեկ. 37:25
 - թ. Չորաբաբել – Անգ. 2:23
 - ժ. Սողոմոն – 3 Թագ. 3:8
 - ի. Եսայի – Ես. 20:3, 44:26
 - լ. Հիսուս – Մատթ. 12:15-21, մեջբերված է Եսայի 42:1-4-ից

Սա հարգարժան տիտղոս է, որը կիրառվում է Մեսիայի համար Եսայու «Ծառայի երգեր»-ում (տես՝ Ես. 42:1-4, 49:1-6, 50:4-9, 52:13-53:12): Ոմանք այս բոլորը դիտարկում են որպես Իսրայելին վերաբերվող համարներ (տես՝ Ես. 41:8-9, 42:19, 43:10, 44:21), սակայն Ես. 52:13-53:12 նկատի ունի անհատ, կատարյալ իսրայելացու (ուշադրություն դարձրե՛ք Եսայի 53:8): Ծառան չի կարող մեռնել ծառայի մեղքերի համար: Նկատե՛ք Մատթ. 27:38, 59: Աստված է վերահսկում պատմությունը, մարդկանց, ազգերին, և անգամ Սատանային. բոլորը կարող են գործածվել Նրա փրկագործության նպատակների համար (տես՝ **ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ**): Նա Քրիստոսին էլ գործածեց (տես՝ Եսայի 53:10):

Քարոզչի Աստվածաշնչան Մեկնություն գրքի ծանոթագրությունը, հատոր 6, էջ՝ 545, շատ օգտակար է, քանի որ ընդգծում է «Իմ Ծառան» տիտղոսի տարբեր կիրառվումները՝

1. Աստծո ծառան որպես մարգարե, տես՝ Թվոց 12:7-8, Նեեմ. 1:7, Դան. 9:11
 - ա. Մովսեսը
 - բ. Դանիելը, տես՝ Դան. 9:17
2. Աստծո ծառան որպես ռազմական առաջնորդ (այսինքն՝ Հեսուն), տես՝ Հեսու 24:29, Դատ. 2:8
3. Աստծո ծառան որպես Թագավոր (այսինքն՝ Դավիթը), տես՝ 2 Թագ. 7:5,8, Սաղմոս 18, 36, Եզեկ. 28:25, 37:25
4. Աստծո ծառան որպես կազմակերպիչ՝
 - ա. Նեեմիան, տես՝ Նեեմ. 1:6
 - բ. Չորաբաբել, տես՝ Անգ. 2:23
5. ամբողջ Իսրայելը (կամ Հակոբը), տես՝ Եսայի 41:8,9, 42:1, 19, 43:10, 44:1,21, 49:3, Եզեկ. 28:25, 37:25
6. Իսրայելի մնացորդը, տես՝ Եսայի 41:8-10
7. աստվածավախ անհատը, տես՝ Հոբ 1:8, 2:3, 42:8
8. անհավատ իշխանները, ովքեր ծառայում են ՅԱՀՎԵԻ նպատակների համար
 - ա. Կյուրոսը, Եսայի 44:28, 45:1
 - բ. Նաբուգոդոնոսորը, Երեմ. 25:9, 27:6, 43:10:

69:19 Շատ անգլերեն թարգմանություններ Սաղմ. 69:19 դիտարկում են որպես Սաղմ. 69:20-21-ի հետ համագոր:

Ուշադրություն դարձրե՛ք կյանքի վերաբերյալ արևելյան աշխարհընկալումը, որը շեշտադրում է մարդու հեղինակությունը:

1. նախատինք – BDB 357, տես՝ Սաղմ. 69:20
2. ամոթ – BDB 102
3. անարգանք – BDB 484

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 69:20-21

²⁰Նախատինքը սիրտս կտրեց ու տխրությամբ լցվեցի,

Մի գթացողի էի կարոտ, բայց չկար

Ու մխիթարողների, բայց չգտա:

²¹Նաև կերակրի տեղ մաղձ տվեցին ինձ,

Ու ծարաված ժամանակ քացախ տվեցին խմելու:

69:20-21 Եբրայերեն «մաղձ» (Սաղմ. 69:21) բառը «թույն» է (BDB 912 II), սակայն այն կարող է վերաբերել վատ գինուն (տես՝ 2 Օր. 32:32): LXX թարգմանությունն է փոխել այն «մաղձի» կամ «դառնության» (կանաչ - *cholē*): Համատեքստում այս «թույն» և «քացախ» բառերը վերաբերում են սաղմոսերգուի հակառակորդներին (այսինքն՝ ուխտի համախոհներին, մտերիմ ընկերներին և ընտանիքին, տես՝ Սաղմ. 69:8):

Այս պարբերությունը մեջբերվում է Մատթ. 27:34-ում, երբ իրականանում է Հիսուսի խաչելության ժամանակ: Սաղմ. 69:21 ակնարկվում է Մարկոս 15:23, Ղուկաս 23:36, Հովհաննես 19:28-30-ում: Այս Սաղմոսը և Սաղմոս 22 երկու ՀԿ-յան ակնարկներ և մեջբերումներ են, որոնք ՆԿ-ը գործածում է Հիսուսի խաչելության փորձառության համար:

Այս սաղմոսները կանխատեսություններ չեն, այլ տիպաբանություն: Տես Սաղմոս 22-ի գրառումները: Սաղմոս 69:22-28-ը չի համապատասխանում Հիսուսի վերաբերմունքի հետ կամ խաչի վրայից Նրա խոսքերի հետ:

69:20 «Ես այնքան հիվանդ եմ / տխրությամբ լցվեցի» Այս ԲԱՅԸ (BDB 633, KB 683) ՀԿ-ում միայն այստեղ է գտնվում: BDB առաջարկում է «հիվանդ», իսկ KB-ն՝ «անբուժելի»: NJB տալիս է «անցած բժշկությունը»: Հավանաբար սա նշանակում է «հուսահատ» (տես՝ NRSV, TEV, JPSOA): Եթե «հիվանդ», ապա Սաղմ. 69:29 գուզահեռ է:

69:21 «քացախ» Այս տերմինը (BDB 330) վերաբերում է էթանագին գինուն (տես՝ Թվոց 6:3): Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱԼԿՈՀՈԼԸ ԵՎ ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 69:22-28

²²Նրանց սեղանը նրանց առջև որոգայթ թող լինի,

Նրանց բարեկեցությունը նրանց համար թակա՛րդ թող դառնա:

²³Նրանց աչքերը թող մթնեն, որպեսզի չտեսնեն,

Ու նրանց մեջքերը շարունակ դողացրո՛ւ:

²⁴Քո գայրույթը նրանց վրա՛ թափիր,

Ու սաստիկ բարկությունդ թող նրանց վրա հասնի:

²⁵Նրանց բնակավայրը թող ավերակ դառնա,

Ու նրանց վրաններում ոչ ոք չապրի:

²⁶Քանի որ հալածում են նրան, ում Դու հարվածեցիր,

Ու խոսում են նրա վշտի մասին, ում Դու վիրավորեցիր:

²⁷Նրանց անօրենության վրա անօրենությո՛ւն դիր,

Թող չհասնեն Քո արդարությանը:

²⁸Կենաց Գրքից թող ջնջվեն ու արդարների հետ չգրվեն:

69:22-28 Այս պարբերությունը քննարկում է, թե ինչ խնդրում սաղմոսերգուն, որպեսզի ՅԱՀՎԵՆ անի իր թշնամիներին: Տես Սաղմ. 69:6-ի գրառումները (ԱՆԿԱՏԱՐՆԵՐԸ կիրառված որպես ՀԱՅ-ՅԱԿԱՆՆԵՐ): Գոյություն ունեն՝

1. երեք ՀԱՅՅԱԿԱՆ
2. հինգ ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
3. երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
 - ա. շարունակ նրանք մեջքը դողացնում էր – BDB 588, KB 609, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (սա Սաղմ. 69:29-ի բանաստեղծական հակադարձն է)
 - բ. քո գայրույթը նրանց վրա թափիր – BDB 1049, KB 1629, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

69:22 Այս համարը մեջբերված է Հռոմ. 11:9-10-ում, որը գործ ունի անհավատ Իսրայելի հետ:

Սաղմ. 69:25 մեջբերված է Գործք 1:20-ում՝ «Արյան Ագարակի» վերաբերյալ, որը քահանաները գնեցին Հուդայի Հիսուսին մատնած գումարով:

Սաղմոս 69:27-ի հնարավոր է ակնարկվում է Հռոմ. 1:28-ում, որը գործ ունի ամբողջ մարդկության մեղավորության հետ (տես՝ Հռոմ. 3:9-18, 23):



NASB	«երբ խաղաղության մեջ են»
NKJV	«նրանց բարեկեցությունը»
TEV	«սուրբ տոներ»
NJB	«նրանց առատությունը»
REB	«երբ ապահով են գգում»

MT տալիս է «ապահովություն» (BDB 1022), իսկ արամերեն Թարգում թարգմանությունը տալիս է՝ «պատարագի տոներ» (տես՝ NRSV, TEV): NRSV փոխում է այն «նրանց համախոհների համար որոգայթ» (տես՝ JPSOA) կիրառելով Սաղմոս 55:20-ից մի դարձվածք (այսինքն՝ մտերիմ ընկերներ):

69:25 Սա Անապատում Դեզերելու Շրջանից մի դրվագ է:

69:26 Այս համարը կարծես թե արտացոլում է Եսայի 53:4 և 10 (տես՝ 2 Կորնթ. 5:21):

«Վիրավոր» թարգմանված ԳՈՅԱԿԱՆԻ ԲԱՅԻ ձևը (BDB 319) հայտնվում է Եսայի 53:5-ում (BDB 319, KB 320, *Poal* ԴԵՐԲԱՅ): «Խոցված» (BDB 645, KB 697, *Hophal* ԴԵՐԲԱՅ) ԲԱՅԸ նույնպես հանդիպում է Եսայի 53:4-ում:

Սաղմոս 69:21 և 26 անշուշտ պատճառ են եղել Ավետարանը գրողների համար տեսնել կապը:

69:28 ՀՄԱ-ում քաղաքի քաղաքացիները արձանագրվում էին մի գալարի վրա: Աստվածաշունչը գործածում է այս պատկերը՝ արտացոլելու Աստծո գիտությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՒ ԵՐԿՈՒ ԳՐՔԵՐԸ

NASB (ԹԱՐԿԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 69:29-33

²⁹Բայց ես աղբատ եմ ու վշտով լի.

Թող Քո փրկությունը, ո՛վ Աստված, ինձ վեր պահի:

³⁰Աստծո անունն եմ փառաբանելու երգով

Ու մեծարելու եմ Նրան գոհություն տալով:

³¹Սա եղջյուրավոր ու կճղակավոր եզից ու զվարակից

Ավելի հաճելի պիտի լինի ՏԻՐՈՋ համար:

³²Հեզերը տեսնելու եմ սա ու ուրախանալու,

Ու ձեր սիրտն ապրելու է, ո՛վ Աստված փնտրողներ:

³³Քանի որ ՏԵՐՆ աղբատներին լսում է

Ու Իր բանտարկյալներին չի անարգում:

69:29-33 Այս պարբերությունը նկարագրում է, թե ինչ կանի ազատագրված սաղմոսերգուն, քանի որ ՅԱՀՎԵԻ փրկությունը ապահով վեր է պահում:

1. ես կփառաբանեմ Աստծո անունը երգով
2. ես մեծարելու եմ Նրան գոհություն տալով

Մա ենթադրում է տաճարի տեսարան, ինչպես Սաղմ. 69:31 (գոհաբերություն): Սաղմոս 69:9 նույնպես տաճարի ակնարկ է (այսինքն՝ «Քո Տունը» և «այրվեց ինչպես գոհի կրակ»):

Անտեղի մեղադրվող և շահագործվող սաղմոսերգուի փրկությունը ՅԱՀՎԵԻ կողմից պատճառ է հանդիսանում, որ ուրիշները ցնձան և վստահեն Նրան (տես՝ Սաղմ. 69:32-33):

69:29 «վշտով լի» Այս տերմինի (BDB 776) և Սաղմ. 69:20-ում հազվադեպ հանդիպող «հիվանդ» կամ «հուսահատ» բառերի պատճառով շատ մեկնաբաններ պնդել են, որ սաղմոսերգուն հիվանդ էր, սակայն ես կարծում եմ համատեքստը մատնանշում է հալածանք և հոգեբանական ճնշումներ, ոչ թե ֆիզիկական հիվանդություն, չնայած որ դրանք հաճախ փոխկապակցված են (այսինքն՝ պատճառահետևանքային են):

Նաև հնարավոր է, որ հիվանդության փոխաբերությունը կիրառվում է որպես սաղմոսերգուի մեղքի զգացողության մեկ այլ կերպ (տես՝ Սաղմ. 69:5): Բժշկությունը հաճախ դարձվածք է ներման՝ թողության համար (տես՝ Սաղմ. 103:3, Եսայի 1:5-6):

69:31 Այս համարը կիրառվում է աստվածաբանորեն մ. թ. 70-ից հետո Հուդայականության կողմից «գոհաբերությունը» «փառաբանությամբ» փոխարինելով (տես՝ Սաղմ. 40:6, 50:13-14, 51:16-17): Փառաբանությունը հաճելի է Աստծուն:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 69:34-36

³⁴Թո՛ղ փառաբանեն Նրան երկինք ու երկիր,

Ծովն ու բոլոր նրա մեջ շարժվողները:

³⁵Քանի որ Աստված փրկելու է Սիոնն ու շինելու Հուդայի քաղաքները:

Որպեսզի նրանք այնտեղ բնակվեն ու այն որպես սեփականություն ունենան:

³⁶Նաև Իր ծառաների սերունդը պիտի ժառանգի այն .

Ու Նրա անունը սիրողները նրա մեջ են բնակվելու:

69:34-36 Ինչպես որ հաճախ է լինում Սաղմոսներում, գոյություն ունի վերջին փոքրիկ պարբերություն, որը կիրառվում է հավաքական երկրպագության համար (տես՝ Սաղմ. 103:19-22): Ստեղծագործության Աստվածը նաև Իսրայելի Աստվածն է, որը բնակվում է Սիոնում՝ Հուդայում Իր ժողովրդի հետ միասին: Նրանք բնութագրվում են որպես՝

1. Իր ծառաների սերունդը
2. մարդիկ, որոնք սիրում են Նրա անունը

Եթե այս Սաղմոսը Դավթի ժամանակներից է, կունենար «Իսրայել» անունը, ոչ թե «Հուդա», ուստի՝

1. Դավիթը չի գրել այն (այսինքն՝ չենք կարող վստահել Սաղմոսների վերնագրերին. դրանք բացակայում են Մեռյալ Ծովի Գալարներում և հաճախ չեն համընկնում Սաղմոսներում տեքստային տեղեկությանը):
2. ինչ-որ մեկը հետագայում ավելացրել է այս վերջին պարբերությունը, հավանաբար գերությունից հետո:

69:34 «երկինքն ու երկիրը... ծովերը» Այս երեք ԳՈՅԱԿԱՆՆԵՐԸ կիրառվում են ամբողջ ստեղծագործության համար (տես՝ Ելից 20:4,11, 2 Օրինաց 5:8, Սաղմ. 96:11, 135:6, 146:6, Անգ. 2:6):

1. երկրի մթնոլորտը
2. երկրի ցամաքը
3. երկրի օվկիանոսներն ու լճերը

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտոդոլոթյան մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Թվարկե՛ք ՆԿ-ում այն տեղերը, որտեղ մեջբերված է այս Սաղմոսը:
2. Ինչո՞ւ է այն այսքան շատ մեջբերված:
3. Ինչո՞վ են տարբերվում այս Սաղմոսում արտահայտված զգացմունքները Հիսուսի վերաբերմունքից:
4. Թվարկե՛ք այն համարները, որոնք կարծես թե մատնացույց են անում Եսայի 53 գլուխը:
5. Բացատրե՛ք այս Սաղմոսում կիրառված ջրի խորհուրդը:
6. Արդյո՞ք հավաքական ամփոփումը հետագա հավելում է: Այդ դեպքում ներշնչվա՞ծ է արդյոք: